«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Սաների իրավունքների ու ազատությունների , պատվի ու արժանապատվության պաշտպանությունը

Հաստատություն ՝ << Աշտարակ համայնքի թիվ 5 Արաքս Մուրադյանի անվան մանկապարտեզ >> ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Մերի Հարությունյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …… 2

Երեխայի իրավունքները

Որոնք են երեխայի իրավունքները ……..……..4

Կարիք ունեցող երեխաների իրավունքները ……6

Ազատ երեխան

5-6 տարեկան երեխաների ազատ որոշումներ կայացնելու իրավունքը……8

Ի՞նչ է ազատ խաղը, և ինչու՞ պիտի այն խրախուսել ……..9

Որն է ազատ խաղի օգտակարությունը երեխաների համար ……..……10

Պատիվ և արժանապատվություն

Քննադատություն մեծահասակի կամ ծնողների կողմից ……11

Ի՞նչն է վիրավորում երեխային ……...…12

Վիրավորանք թե խրախուսանք 13

Կոմպլեքս և թեմատիկ ուսուցման պլանավորումը մանկապարտեզ……..14

Եզրակացություն …….....21

Ներածություն

Մանկությունը շատ ավտոնոմ ոլորտ է և ինքնաբավ աշխարհ, մեծերը շատ զգուշորեն պետք է այնտեղ մտնեն: Շատ կարևոր է երեխաներին մանկուց բացատրել թե ինչ է ազատությունը, նրանց իրավունքները: Հիմնաքարային երևույթներ կան , որ հետո երեխայի աշխարհընկալումն են ձևավորում: Այսօր երեխայի համար պարզ, փոքր երևույթների մասին պատմություններ քիչ են ստեղծվում, փոխարենը կրթական բովանդակությունն է գերիշխում:Աշխարհը շարունակ փոփոխվում է մարդկային գործունեության արդյունքում:Արդի աշխարհը հետևանքն է երեկվա մեր գործելակերպի, իսկ մեր այսօրվա գործողությունները պայմանավորում են մեր ապագան: Այս գիտակցությամբ կարող ենք այսօր օգնել մեր երեխաներին հետազոտելու և վերլուծելու այն գործընթացները, որոնք ներգործություն ունեն ապագայի ձևավորման վրա: Հարկավոր է ուղղորդել նրանց, որպեսզի կարողանան գիտակցված և պատասխանատվությամբ գործել՝ նպաստելով ավելի բարվոք ապագայի կերտմանը:

Սույն փաթեթի ստեղծումը թելադրված է հենց այս ամենին նպաստող մի երևույթի ՝ սաների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության անհրաժեշտության գիտակցմամբ:

Իրավունքն ու ազատությունը մի երևույթ է, որը միտված է ժողովրդավար , ազատ ու արդար հասարակության ձևավորմանը՝ նպաստելով ապրել և համագործակցել սովորեցնելուն: Այն խթանում է այնպիսի արժեքներ ու սկզբունքներ, ինչպիսիք են՝ ազատությունը, բազամակարծությունը, երեխայի իրավունքները, օրենքի գերակայությունը:

Երեխաների իրավունքները հասարակության միասնականության, փոխըմբռման գործոն է, որը նպաստում է երեխաների միջև խաղաղ, ներդաշնակ հարաբերությունների խթանմանը և մերժում խտրականությունը, բացառում բռնությունը:

Սաների իրավունքների և ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունն ուսումնադաստիարակչական գործընթացում հետազոտման նպատակն է երեխաներին օգնել ձեռք բերելու որոշակի կարողություններ, ինչպիսիք են ՝

1. արդյունավետ հաղորդակցվելը և համագործակցելը

2. տեղեկատվությունը ազատ վերլուծելու կարողությունը

3. այլոց հետ կառուցողականորեն , համերաշխ հարաբերվելու կարողությունը

4. ազատ ընտրություն կատարելու , որոշում կայացնելու և խնդիրներ լուծելու ունակությունը

5. իրավունքների և պարտականությունների փոխկապակցվածության գիտակցումը, շրջապատի հանդեպ հոգատար վերաբերմունքը և քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը:

Փաթեթը բաղկացած է բաժիններից: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են երեխաների հիմնարար իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվություններ,որպեսզի երեխան հասկանա իր իրավունքներն ու ազատությունները: Փաթեթում ներկայացված են թեմատիկ պարապմունքներ, որոնք կունենան իրենց դրական արդյունքը նախադպրոցական տարիքի երեխաների համար:

Որոնք են երխաների իրավունքները

Ինչու՞ ենք կարևորում , որ երեխաները սովորեն թե ինչ է իրավունքը:

Աշխարհի մարդիկ բոլորն էլ միատեսակ կենսական կարիքներ ունեն՝ սննդի, կացարանի, առողջության, սիրո, բարեկամության և այլն:Մինչդեռ հաճախ այս հիմնական կարիքները չեն բավարարվում:Ամենամեծ անարդարությունը, թերևս, չքավորությունն է , որի պատճառով մարդը զրկվում է կենսական կարիքները բավարարելու իր իրավունքից: Իրավազրկության պատճառ է նաև խտրականությունը՝ լինի դա ռասայական, սեռային, կրոնական և այլն:

Այս ամենը բերում է մի պարզ ճշմարտության,որ արդարությունը մարդկության առաջընթացի կարևորագույն նախապայմանն է :

Ամեն հասարակություն հույս ունի , որ իրենց երեխաները մեծանալով ունակ ու պատասխանատու քաղաքացիներ կդառնան և ի վիճակի կլինեն գործել ի նպաստ և ի բարօրություն այդ հասարակությանը :

Մինչդեռ երեխան, որը զրկված է իր հիմնական իրավունքներից, չի կարող մեծանալ որպես հոգատար, ուրիշի իրավունքները հարգող, գործուն դիրքորոշում ունեցող անհատ:

Անարդարությունը բախումների և բռնության հիմնական պատճառն է : Իսկ բախումներն ու բռնությունն էլ իրենց հերթին էլ ավելի մեծ անարդարություն են ծնում: Հենց այս պատճառով էլ, գիտակցելով մարդկության առաջընթացի համար արդարության մասին ուսուցանելու անհրաժեշտությանը: Երեխաները պետք է իմանան, թե ինչ է իրավունքը, որոնք են իրենց իրավունքները, որպեսզի կարողանան ապրումակցել նրանց, ում իրավունքները ոտնահարվում են, պատրաստ լինեն պայքարելու թե՛ իրենց, թե՛ ուրիշների իրավունքների համար ՝ հանուն արդարության, հանուն այն բանի, որ մարդիկ , անկախ ծագումից, մաշկի գույնից կամ հավատքից, հավասար իրավունքներով օժտված լինեն, որպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ձևավորվելու որպես անհատ, կայանալու իր ողջ ներուժի չափով:

Սակայն արդարության մասին ուսուցումը միայն օրենքի վերացական հոդվածներին ծանոթացնելով չի սահմանափակվում: Այն կարևորում է, որ երեխաները գիտակցեն արդարությանը վերաբերող խնդիրների ներգործությունն իրենց իսկ կյանքին՝ իրենց անմիջական շրջապատին՝ տանը, մանկապարտեզում, համայնքում, որպեսզի գործնականում նվիրվեն տարբեր ոլորտներում և տարբեր մակարդակներով արդարության և հավասարության հասնելու գործին:[1]

Բոլոր մարդիկ ունեն առաջնային իրավունքներ: Այս իրավունքները վերաբերում են բոլորին՝ անկախ ռասայից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից, սեփական կարծիքից, արմատներց, հարստությունից, ծննդյան կարգավիճակից կամ կարողություններից:

---

[1] Հանդուրժողականության ուսուցում -Երևան 2008 էջ 65-66 17.10.2022

Միայն մեծահասակները չէ, որ ունեն իրավունքներ:Երեխաները ևս ունեն իրավունքներ:

Բայց քանի որ երեխաները փոքր են և մեծահասակներից կախյալ վիճակում, հաճախ մեծահասակները նրանց չեն համարում իրավունքներով օժտված լիարժեք մարդկային էակներ:1989 թվականինն աշխարհի առաջնորդներն ընդունեցին մի համաձայնագիր, որով ամրագրվեց յուրաքանչյուր երեխայի համար մարդու առաջնային իրավունքները: Դրանով ցանկանում էին ամրագրել , որ երխաները ևս ունեն իրավունքներ: Այս համաձայնագիրը՝ << Երեխայի իրավունքների մասին>>կոնվենցիան, վավերացվեց աշխարհի գրեթե բոլոր պետությունների կողմից: Յուրաքանչյուր պետություն, որ վավերացնում է այս համաձայնագիրը, պարտավորվում է ապահովել երեխայի իրավունքների պաշտպանությունն իր երկրում:

Կոնվենցիայով երաշխավորվում են երեխայի հետևյալ իրավունքները՝

. **Կյանքի և իր ներուժի ամբողջական զարգացման իրավունք**

Համապատասխան սնունդ, ապրելու տեղ և մաքուր ջուր

Կրթություն

Առողջապահություն

Ազատ ժամանակ և հանգիստ

Մշակույթային միջոցառումներ

Տեղեկատվություն իրենց իրավունքների մասին

Արժանապատվություն

Պաշտպանված լինելու իրավունք

Բռնությունից և անտեսումից

Շահագործումից

Դաժանությունից

Որոշումների կայացմանը հետևյալ կերպ մասնակցելու իրավունք

Արտահայտելով իրենց կարծիքը, որը պետք է հարգվի և հաշվի առնվի

Արտահայտելով իրենց կարծիքը այն հարցերի շուրջ, որոնք իրենց են վերաբերում

Ազատորեն հաղորդակցվելով այլ մարդկանց հետ

Տեղեկատվություն ստանալով

Դրական դաստիարակման մոտեցումը հիմնված է երեխայի առողջ զարգացման, բռնությունից պաշտպանվելու և սովորելու իրավունքների վրա:

Կոնվենցիայով ճանաչվում է ծնողների առաջնային իրավունքը իրենց երեխաների դաստիարակման գործում: Ծնողներն իրենց երեխաների կարևորագույն ուսուցիչներն են, օրինակը և ուղղորդողները:

Սակայն ծնողներն իրենց երեխաների սեփականատերերը չեն: Մարդու իրավունքների սկզբունքները երաշխավորում են, որ ոչ մեկը չի կարող լինել մեկ ուրշի սեփականությունը:

Կարիք ունեցող երեխաների իրավունքները

Հայաստանի Հանարապետության կրթության մասին օրենքում երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող տարբեր համաձայնագրերում և փաստաթղթերում տեղ են գտել կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ՝ իրենց մյուս հասակակիցների հետ համատեղ կրթություն ապահովելու կարևորոագույն հիմնահարցերը:

Վերապատրաստվելու ընթացքում կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնը խրախուսում է այն միջոցառումները, որոնք նպաստում են վերացնելու հասարակության տարբեր խմբերի միջև առկա մեկուսացնող սահմանները և ստեղծելու պայմաններ կրթությունն ավելի ժողովրդավար և հանդուրժող դարձնելու համար : Կրթության համակարգում ձեռանարկվել են համապարփակ բարեփոխումներ, որոնք սկիզբ են առել բոլոր ոլորտներում՝ մասնավորապես նախադպրոցական հաստատություններում: Իրականացվում է կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հասակակաիցների հետ հանրակրթական հասատատությունում սովորելու գործընթացը, որն ուղղված է նրանց սոցիալականացման ու հասարակական կյանքի ներգրավածության ապահովմանը: Կարևոր հանգամանք է նաև, որ հոգեբանամանկավարժական միջամտությունը թույլ է տալիս ձևավորոել անհրաժեշտ հմտություններ՝ անձի անհատականության և նրա կարողությունների լիարժեք զարգացման համար: Այս իմաստով կարևորվում է այն դրույթը, որի համաձայն կրթության առաձնահատուկ պայմանների կաիրք ունեցող երեխաների սոցիալականացման առաջին փորձն արդյունավետ է սկսել նախադպրոցական տարիքից և նախադպրոցական հաստատություններում: Կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեն այն երեխաները որոնց զարգացումը շեղվում է այսպես կոչված <<միջին մակարդակից>>:

Ընդհանարցնելով ասենք, որ << հատուկ կարիքով երեխաներ>> ձևակերպման տակ այժմ հաճախ դասում են և՛ սակավամիտ, և՛ շարժողական խնդիրներ ունեցող երեխաներին: Ընդ որում <<հատուկ>> բնորոշումը վերաբերվում է երեխայի կրթական պայմաններին ու կարիքներին: Այսինքն ՝ հատուկ են այն երեխաներին խնամելու, դաստիարակելու և ուսուցանելու պահանջներն ու պայմանները:

Նշենք այն կարևոր հանգամանքները, որոնց վրա պետք է հենվեն ներառական նախադպրոցական հաստատությունում աշխատող մասնագետները: .Աշխատանքը կազմակերպել հետևյալ սկզբունքով, հատուկ կարիքներով երեխան խմբի լիարժեք անդամ է, ունի միևնույն իրավունքները, ինչ իր մյուս հասակակիցները: .Հենվել երեխայի ուժեղ կողմերի և կարիքների վրա:

. Խմբում ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ:
. Համատեղ պարապմունքներն ու խաղերը կազմակերպել դաստիարակի և հատուկ մանկավարժի հետ միասին:
. Ծնողների հետ հատուկ աշխատանք տանել, հետևել երեխաների համար նախատեսված անհատական ծրագրի իրականացմանն ընտանիքում:
. Անհատական պարապմունքներ անցկացնել նուրբ շարժողականության զարգացման, ինքնասպասարկման, սոցիալական հմտությունների զարգացման ուղղությամբ:
. Անընդհատ հետևել մեթոդական նոր ցուցումների, համապատասխան գրականությանը:
. Հոգ տանել, որ հատուկ կարիքներով երեխաներին անհարժեշտ բոլոր ծառայություններն իրականացվեն ժամանակին:
. Դաստիարակի օգնությամբ իրականացնել կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնամքը:

. Օգնել երեխաներին կենցաղային և կուլտուր-հիգենիկ միջոցառումների իրականացման ընթացքում:
. Նախադպրոցական ներառական հաստատության հետ համագործակցում են հետևյալ ծառայությունները:
. Ամբուլատոր և ստացիոնար բուժհիմնարկներ, որոնց անձնկազմում ընդգրկված են մանկաբույժ, նյարդաբան, բուժական մերսող և այլ բժիշկներ:
. Հոգեբանական կենտրոն, որտեղ աշխատում են հոգեբանը, արատաբանը, սոցիալական աշխատողը, հատուկ մանկավարժը, արտթերապևտը:
. Քաղաքապետարանի սոցիալական ծառայություն, որտեղ ընդգրկված են իրավաբաններ, սոցիալաական աշխատողներ:
. Մանկավարժական ուղղվածությամբ հաստատություններ,ինչպես, օրինակ՝ հայկական պետական մանկավարժական համալսարանը, Կրթության ազգային ինստիտուտը:

Կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է նախադպրոցական հաստատությունների գործունեության մեջ ներգրավել երեխաների ընտանիքներին:[2]

5-6 տարեկան երեխաների ազատ որոշումներ կայացնելու իրավունք

Թեմայի նպատակն է երեխաներին տեղեկություններ տալ, թե ինչպես նրանք կարող են իրենց ազատ քննարկումների միջոցով հաղթահարել ցանկացած դժվարություններ:

[2] Նախաշավիղ – Երևան 2012 էջ 33 24.10.2022

Եթե ուզում ենք ժամանակակից կյանքի պահանջներին պատրաստ սերունդ ունենալ, նախ և առաջ պետք է օգնել երեխաներին, որպեսզի մեծանալով դառնան պատասխանատու քաղաքացիներ , ունենան անհատական մտածողություն, լինեն ինքնուրույն և իրենց խոսքում լինեն ազատ : Այս ամենի համար կարևոր է, որ նրանք կարողանան պատասխանատու որոշումներ կայացնել, ծառացած խնդիրների համար լուծումներ առաջարկել:Երեխաներին ընտրության հնարավորություն տալով օգնում ենք խթանել նրանց կարողությունները, որոնք հետագայում կնպաստեն ավելի ազատ և անկաշկանդ որոշումներ կայացնելուն:

Ի՞նչ են ազատ որոշումները , և ի՞նչ երեխայի ազատությունը:

Որոշումներն ունեցած տեղեկությունների հիման վրա ստացված դատողություններն ու եզրահանգումներն են: Խնդիրները երկընտրանքներն են, որոնք հարկավոր են վերլուծել որոշումներ կայացնելու համար:

Ազատ որոշումներ կայացնել կարողանալը երեխաներին նախապատրաստում է ժողովրդական հասարակության մեջ ապրելուն: Սակայն նույնիսկ պարզագույն հարցերի վերաբերյալ համաձայնության հասնելը բավական բարդ խնդիր է :Ուստի երեխաներին պետք է թույլ տալ ինքնուրույն մտածել, պետք չէ ասել այն, ինչ նրանք արդեն գիտեն կամ կարող են կռահել: Կարևոր է խրախուսել, որպեսզի հնարավորինս ինքնուրույն և ազատ եզրահանգումներ կատարեն:

Երեխաները որքան հնրավորություն ունենան մտորելու, ազատ և ինքնուրույն վերլուծելու իրենց շուրջ տեղի ունեցող երևույթները, համադրելու միմյնաց դիտարկումները՝ դրանց հիման վրա եզրահանգումներ անելով, այնքան ավելի լավ պատրաստված կլինեն բացահայտելու, պահպանելու և փոփոխելու իրենց շրջապատող աշխարհը:

Որքան ավելի հնարավորություն տանք, որ իրենք փորձեն ազատ, անկաշկանդ լուծումներ առաջարկել՝ միասին անցնելով կասկածների, մերժելու որոշումների ճանապարհը, ծանրութեթև անելով թեր և դեմ կողմերը, այնքան ավելի մեծ կլինեն պատասխանատվություն ստանձնելու իրենց իսկ առաջարկած լուծումների արդյունավետության, ապա և իրագործման համար:

Հենց սրանում է կայանում երեխայի ազատությունը:

Կյանքը ազատ որոշումներ կայացնելու մի շղթա է: Ինչ- որ որոշումներ կայացվում են ինքնուրույն, մյուսները՝ հասարակական ճնշման ներքո: Չնայած դրան ազատ

արտահայտվելու, որոշումներ կայացնելու, կամ խնդիրներ լուծելու բոլոր արդյունավետ մեթոդներն էլ իրար նման են:

Տալով երեխաներին ազատություն, և տանելով նման պարապմունքներ, մենք ակնկալում ենք հետևյալ արդյունքները:

Երեխաները կգիտակցեն ինքնուրույն և կոլեկտիվ խնդիրների համատեղ առավելությունները և լուծումները: Երեխաների մոտ կզարգանան տրամաբանելու, վերլուծելու, փաստարկներ բերելու, հիմնավորելու, եզրահանգումներ անելու հմտությունները:

Երեխաները կկարողանան ազատ և ինքնուրույն որոշումներ կայացնել:

Ի՞նչ է ազատ խաղը , և ինչու՞ պետք է այն խրախուսել

Խաղային ժամանցը միայն զվարճանալու համար չէ, այլև սովորելու: Երբ փոքրիկը ոտանավոր է կրկնում, նա աշխատում է լեզվի զարգացման հմտությունների վրա: Երեխան սիրու՞մ է գնդակ նետել օդ ու բռնել այն: Նա կառուցում է իր մեծ շարժողական և ձեռքի – աչքերի համակարգման կարևոր հմտությունները:

COVID-19 համաճարակի ընթացքում շատ երեխաներ զրկվել են իրենց ընկերների հետ խաղալու հնարավորությունից, ինչը անհրաժեշտ է նրանց զարգացման համար: Չնայած երեխաների համար կարևոր է շփվել իրենց հասակակիցների հետ, ինքնուրույն խաղալ, որը նույնպես օգուտներ ունի:

Ի՞նչ է ազատ խաղը

Ազատ խաղն այն է, երբ երեխաները կարող են խաղալ այնպես, ինչպես ուզում են: <<Նրանք կարող են ընտրել ամեն ինչ, նրանք ազատ են ընտրել իրենց խաղի նյութերը, հետաքրքրության տարածքը և նույնիսկ սյուժեն>>, - բացատրում է Զամանը: Ազատ խաղաժամանակի ընթացքում երեխաները կարող են ինքնադրսևորվել, իրենց շուրջ ստեղծելով այն ինչն իրենց է հետաքրքիր՝ կախված օրից, ժամից և իրավիճակից, որում գտնվում են: Այս տեսակի հնարավորությունները շատ կարևոր են երեխաների համար:

Յուրաքանչյուր երեխա եզակի է և ունի ինքնադրսևորման ուրույն ձև:

Կան երեխաներ, որոնք սիրում են նկարել, բայց մյուս երեխաները կցանկանան գլուխկոտրուկներ լուծել: Յուրաքանչյուր երեխա ունի ստեղծագործական արտահայտման յուրահատուկ եղանակը:

Ո՞րն է ազատ խաղի օգտակարությունը երեխաների համար

Երբեմն լավ է, որ երեխաները մենակ կամ ինքնուրույն են խաղում: Երբ երեխան մենակ է խաղում, նա զբաղվում է իրենով ՝ օգտագործելով իր երևակայությունը և շատ վաղ

մանկությունից նրանք անկախ են: Վաղ տարիքում անկախության ձևավորելն օգտակար է հետագա կյանքի ընթացքում:

Ազատ խաղն կարևոր է նաև խնդիրների լուծման հմտությունների ձևավորման համար: Խաղի ընթացքում նրանք կարող են գտնել խնդրի լուծումը, կամ սեփական լուծումն առաջարկել: Նրանք պետք է արտահատեն իրենց մտածելակերպը: Այդ հմտությունները զարգանում են երբ երեխան ինքնուրույն է խաղում:

Ազատ խաղը երեխայի համար հնարավորություն է ստեղծում յուրովի ուսումնասիրել սենփական աշխարհը և օգնում խթանել ստեղծագործելու ունակությունը ու օգտագործել երևակայությունը, ուստի ազատ խաղեր ընտրելու հնարավորություն պետք է տալ վաղ տարիքից:

Շատ կարևոր է երեխաներին մանկուց բացատրել՝ ինչ է ազատությունը, հիմնաքարային բաներ կան, որոնք հետո երեխաների մոտ աշխարհայացք են ձևավորում:

Իմ կարծիքով պետք է ստեղծվեն ավելի շատ մանկական միջոցառումներ, որ մեծերը մի քիչ երեխա դառնան, մի քիչ էլ իրենք երևակայեն , երեխաներն էլ արժևորված զգան իրենց, որ սիրված են և ազատ , այդ ազատությունները իրենց պետք է տրվեն , ու մենք էլ դրա երեշխավորները պետք է լինենք:

Քննադատություն մեծահասակլի կամ ծնողների կողմից

Երբեմն դաստիարակները կամ ծնողները ցանկանում են ուղղել երխաներին նրանց կոչելով վատ երեխա, կոպիտ, անզգույշ տհաս կամ անկարող: Երբ երեխաները նման քննադատություն են լսում իրենց մերժված և ճախողված են զգում: Կամա թե ակամա վիրավորվում է նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Եթե նրանք ընդունեն, որ անկարող են , դժվար թե նրանք փորձեն աշխատել նոր հմտություններ ձեռք բերելու ուղղությամբ:

Ստացվում է այնպես, որ դաստիարակները , ուսուցիչները և ծնողները փոխարեն կերտելու լավ ապագա ունեցող սաներ, դրդում են տարբեր տեսակի հանցագործության վիրավորելով երեխայի պատիվն ու արժանապատվությունը:

Երեխաները սովորում են: Իրենց գիտելիքները և հմտությունները կառուցելիս նրանք մեզանից են կախված: Նրանք մեր խրախուսանքի և աջակցության կարիքն ունեն:

Եթե մենք բաձրացնում ենք երեխայի ինքնագնահատականը, երեխաները առավել հաջողակ են դառնում , քանի որ նրանք ցանկանում են փորձ անել: Նրանք ավելի ուրախ են, քանի որ ճախողումները հաղթահարելիս նրանք վստահում են իրենց հմտություններին: Նրանք լավ հարաբերության մեջ են դաստիարակների հետ, որովհետև գիտեն որ դաստիարակը հավատում է իրենց ուժերին: Դաստիարակները մեծ դեր կարող են ունենալ երեխաների ինքնագնահատականի բարձրացման ճանապարհին:Նրանք կարող են .

Գնահատել իրենց երեխաների ջանքերը, եթե նույնիսկ դրանք կատարյալ չեն,

Գնահատել խմբի երեխաների՝ օգնություն ցույց տալու ցանկությունը,

Աջակցել երեխաներին նրանց ճախողումների ժամանակ

Խրախուսել հետագա ջանքերը,

Երեխաներին ասել այն, ինչ նրանց օգնում է իրենց առաձնահատուկ զգալ:

Խրախուսանքը մեզ՝ բոլորիս օգնում է հաջողության հասնել: Փոխարինելով վիրավորանքը խրախուսանքով՝ կարող ենք հսկայական դրական ազդեցություն ունենալ երեխայի վրա:

Ի՞նչն է վիրավորում երեխային

Մանկության շրջանում հիմնական երևույթներից մեկը հույզերի կառավարումն ու արտահայտումն է: Սա բարդ առաջադրանք է, քանի որ հույզերը մեզ երբեմն խանգարում են ճիշտ մտածել: Դրանք կարող են մեզ հանգեցնել իմպուլսիվ գործողությունների՝ ասել կամ անել բաներ, որ այդ պարագայում երբեք չէինք ասի կամ անի:

Երեխայի համար բարդ խնդիր է հույզերը հասկանալը և դրանք դրական կերպով արտահայտելը: Երբեմն երեխայի հույզերը նրանց հունից հանում են: Ինչպես վաղ մանկության հասակում, միջին հասակում ևս երեխաները կարող են պարզապես լուռ լինել, ի վիճակի չլինել կամ վախենալ արտահայտել իրենց զգացողությունները:

Այս պահերին նրանք պետք է զգան , որ իրենք սիրված և պաշտպանված են: Հեշտ չէ հանգիստ խոսել երեխայի հետ, երբ նա անկառավարելի է և զայրացած:Առավելագույնը, որ կարող ենք անել, նրա կողքին լինելն է ՝ մեր գործողություններով, ապացուցելով, որ մենք նրան սատարում ենք, եթե նա մեր կարիքն ունի: Երբ <<Փոթորիկը հանդարտվի>>, մենք կարող ենք խոսել խնդրի մասին և մեր հանգիստ վարքագծով կարող ենք ցույց տալ մեր երեխային, թե ինչպես կարելի է դրական կերպով արտահատել հույզերն ու զգացմունքները: Մենք կարող ենք նաև նրանց ցույց տալ այն խնդրի լուծումը գտնելու ճանապարհները, որը բռնկումի պատճառն է հանդիսացել: Երբ վիրավորվում է երեխայի պատիվն ու արժանապատվությունը երեխան վիրավորվում է, բայց փոթորիկը անցողիկ է: Մանկապարտեզում նորմերն ու սահմանափակումները կարող են այնպիսի դրական կերպով կիրառվել, որով կվերահաստատվի երեխայի ինքնավստահությունը: Նորմեր և սահմանափակումներ կիրառելով հանդերձ՝ ծնողը կամ դաստիարակը կարող են չլինել կոպիտ և վիրավորող երեխայի նկատմամբ:Ահա որոշ օգտակար խորհուրդներ ծնողավարման դրական մոտեցումների համար՝

Համոզվեք, որ միջավայրը, բնակարանը, խմբասենյակը անվտանգ է երեխայի համար և բոլոր վտանգները, սպառնալիքները դուրս են երեխայի ճանապարհից

Համոզվեք, որ երեխաները գիտեն, թե ինչ են անում և թե ինչ է նրանցից ակնկալվում:

Օգնեք նրանց ստեղծելու և պահպանելու որոշ պարզ և բարի կանոններ, օրինակ՝ <<մանկապարտեզում մեր խաղալիքները ընդհանուր են>>:

Առավելապես կենտրոնացեք նկատելու երեխայի <<լավ>. պահվածքը կամ կատարած աշխատանքը :

Արագ և պատշաճ կերպով գովեք նրանց և թույլ տվեք մյուսներին ևս իմանան, որ երեխաները լավ են դրսևորել իրենց:

Որքան հնարավոր է խուսափեք նկատել <<վատ>> պահվածքը, վարքը (աշխատեք չկառչել դրանից):

Օգտագործեք ամենատարբեր մեթոդները՝ վերականգնելու երեխայի ընդունելի վարքագիծը (օրինակ ցույց տվեք երեխաների նկարած նկարները) :

Արեք այնպես, որ երեխան իմանա, թե կոնկրետ ինչպիսի վարքի համար է խրախուսվում, գովաբանվում, դրա համար գովելիս դա արտահայտեք նախադասության մեջ (օրինակ Ճա՜տ ապրես, դու կապեցիր քո ոտնամանի թելերը:);

Միշտ երեխային ցույց տվեք , որ դուք սիրում եք նրան անկախ նրանից , թե ինչպիսի վարք է դրսևորում տվյալ ժամանակ :

<<Լավ>> վարքի համար ստեղծեք հատուկ պարգևատրումներ (խուսափե՜ք քաղցրավենիքով պարգևատրումներից):

Ավելի փոքր երեխաների դեպքում բոլոր ուղղումները, նկատողություններն ու բացատրությունները պետք է տեղում անմիջապես իրականացվեն, քանի որ նրանք ի վիճակի չեն մի քանի ժամ կամ օր հետո վերհիշել իրենց վարքը: Տվեք կարճ և հստակ բացատրություններ: Երեխայի մեծանալուն զուգահեռ ընդլայնեք տրամաբանական կապը:[3]

Վիրավորանք թե՞ խրախուսանք և գովասանք

Դրական ուշադրությունը նպաստում է երեխայի բարեկեցությանը:Երեխաները կարիք ունեն սիրված և գնահատված լինելու: Շատ ծնողներ կարծում են, որ ավելի հեշտ է բացասական կարծիք տրամադրել քան դրական, սակայն միշտ արժե խարախուսել երեխային:Ընտրելով և ամեն օր երեխայի համար օգտագործելով ստորև ներկայացված որոշ արտոնություններ՝ մենք կնկատենք, որ նա ավելի շատ ուշադրություն է տրամադրում մեզ՝ միևնույն ժամանակ փորձելով գոհացնել:

<<Այո>>,<<Լավ>>, <<Հիանալի>>, <<Շատ լավ>>, <<Գերազանց>. :

<<Ինձ դուր է գալիս թե ինչպես ես դա անում>>:

<<Ես հիացած եմ քեզանով>>

<<Ես նկատել եմ, թե դու ինչ գեղեցիկ ես նկարում>>:

<<Դու ավելի ու ավելի լավ ես պատմում հեքիաթը>>;

Նմանատիպ գեղեցիկ խոսքերը միշտ ոգեշնչում են երեխաներին:

Մենք կարող ենք նրանց ցույց տալ կամ ասել թե ինչ ենք զգում:

Ժպտանք: Գլխով համաձայնվենք: Շոյենք ուսը, գլուխը:

Արտահայտենք մեր համաձայնությունը շարժումով կամ ձայնով, <<գերազանց է>> արտահայտությամբ, շոյենք այտը: Ինչու չէ նաև գրկենք:

[3] Դրական ծնողավարման ձեռնարկ Երևան 2011 էջ 56-57 25/10/2022

Այս ամենը անելով մենք կբարձրացնենք երեխայի ինքնագնահատականը, և մեր դրական վերաբերմունքով չենք վիրավորի մեր երեխաների պատիվն ու արժանապատվությունը: Մենք միասին կարող ենք կերտել լավ ապագա մեր երեխաների համար: Ամեն ինչ կախված է մեզանից:

Կոմպլեքս, թեմատիկ ուսուցման պլանավորումը

մանկապարտեզում

Կրթադաստիարակչական աշխատանքների պլանավորումը մանկապարտեզում համարվում է դաստիարակի կարևոր գործառույթներից մեկը: Պլանավորման մեջ մեծ տեղ պետք է հատկացնել ինտեգրված- թեմատիկ ուսուցմանը, որի հիմքում ընկած են ուսուցման ծրագրային նյութի ամբողջականությունն ինչպես տարվա, ամսվա, այնպես էլ շաբաթվա և օրվա կտրվածքով:

Կենտրոնացված ուսուցման պլանավորումը իրականացվել է հետևյալ հիմնադրույթների հաշվառմամբ:

-Հիմնական ծրագրային նյութի ուսուցում և ամրակայում խմբային պարապմունքների միջոցով

-Հեռանկարային պլանավորում, որի առաձնահատկությունը կրթադաստիարակչական գործընթացի կանխատեսումից ինչի՞ մասին երեխան պետք է պատկերացում կազմի , ի՞նչ պետք է իմանա

Կրթադաստիարակչական աշխատանքների ծրագրավորումը , որի հիմքում կենտրոնացված ուսուցումն է, պահանջվում է դաստիարակի հետևյալ քայլերը

- Ծրագրային նյութի յուրացում մեկ շաբաթվա կտրվածքով
- Ամփոփիչ միջոցառման մշակում, որը հնարավորություն կտա գնահատելու երեխաների ձեռքբերումները և ծրագրի նպատակները
- Ձևավորող գնահատականի, վերջնաարդյունքի ամփոփում:
- Անհարժեշտ է նշել, որ ծրագրի արդյունավետությունը պայմանավորված է
- ամփոփիչ միջոցառման ժամանակ երեխաների կողմից դրսևորող գիտելիքների և ձևավորված հմտությունների համալիր գնահատականով: Ներկայացնում եմ ավագ խմբի համար նախատեսված պարապմունքի օրինակ:

<< Հրաշքների մոլորակը>>

Նպատակները՝

-Օգնել երեխաներին գիտակցել, որ բոլորը ունեն իրավունքներ և վերհանել դրանց դերը։

- Օգնել տարբերակել կարիքներն ու պահանջները ըստ առաջնահերթության։ Նպաստել իրավունքների անհարժեշտությունը գիտակցելուն։

- Ծանոթացնել երեխայի իրավունքներից մի քանիսին, օգնել գիտակցել դրանց անհրաժեշտությունը։

-Դաստիարակել հանդուրժողականություն ։

- Զարգացնել և ամրակայել միմյանց հետ խոսքային հարաբերության մեջ մտնելու, տարեկիցների և մեծահասակների հետ հանգիստ զրուցելու, չպիտակավորելու կարողություն։

-Զարգացնել զրույցին մասնակից լինելու երեխաների կարողությունը, սովորեցնել վարել ակտիվ երկխոսություն։

-Զարգացնել զրուցակցին լսելու, իր տեսակետը արտահայտելու, ուրիշի տեսակետը լսելու, ընդհանուր զրույցին քաղաքավարի մասնակցելու կարողություններ։

Անհարժեշտ պարագաներ՝ - սեղանային թատրոն շնիկ, տուփ, քարտեզ, գիտունիկ, <<Կենդանաբանական այգում>> նկար, գնդակ, Տիկնիկ Ալիսան, զարդարված գիրք։

Կիրառվող մեթոդներն ու մեթոդական հնարներն են ՝ << Անակնկալ>>, << Հարց ու պատասխան>>, <<Մտագրոհ>>։

Ընթացքը ՝

Անակնկալների մեթոդ

Դաստիարակ.-Երեխներ այսօր մեզ հյուր է եկել փոքրիկ Դինո շնիկը, նա շատ տխուր է, իսկ Դուք կարող եք գուշակել ի՞նչ է պատահել Դինոյի հետ։

Կիրառվում է մտագրոհի մեթոդը

Լսել երեխաների պատասխանները, որից հետո շարունակել։

-Երեխաներ Դինո շնիկը իր հետ մի փոքրիկ տուփ է բերել տեսնենք ինչ կա նրա մեջ։ Բացել տուփը, տուփի մեջ ինչ-որ քարտեզ, քարտեզի մեջ նամակ։

<<Բարև ձեզ սիրելի երեխաներ։ Ձեզ է գրում հրաշքների մոլորակի արաքայադուստր Ալիսան։ Մեր երկրում բազմատեսակ քաղաքներ կան, որոնք զարմանալի անուններ ունեն << իրավունք>> <<ազատություն>> << պատիվ արժանապատվություն>>։

Հրաշքների մոլորակը վտանգի մեջ է, չար կախարդ Ավիրեմը մոլորակը խառնել է իրար, իսկ մենք չենք կարողանում այն վերականգնել, նշեմ նաև, որ մեր մոլորակի փոքրիկներն էլ են վտանգի մեջ։

Մեր երկրի ամենածեր բնակիչը պատմեց, որ երկիր մոլորակում կա << Ձեփյուռ>> Մանկապարտեզ, ուր հաճախում են համարձակ երեխաներ և միայն նրանք կարող են օգնել փրկելու մեր մոլորակը։ Եվ Դինոյի հետ որոշեցինք ուղարկել այս տուփը, որի մեջ է մեր մոլորակի ուղևորության քարտեզը։

Խնդրում եմ երեխաներ վերականգնեք մեր մոլորակը այն ձեզ էլ շատ կօգնի>>։

Իրավունքների քաղաք

Դաստիարակը հարցնում է երեխաներին << Ինչ կուզեին ունենալ>> ցանկը՝ ներկայացնելով, որ դրանք անհարժեշտ են լիարժեք ապրելու համար։

Լսելով երեխաների պատասխանը առաջարկում է պատկերացնել. թե օդապարիկով ճամփորդում են ։ Օդապարիկում են գտնվում թվարկվածները << Ծանրոցների տեսքով, որոնք իրավունքներ են խորհրդանշում։Եղանակը անսպասելի վատանում է և միակ միջոցը ծանրոցներից մեկը դուրս նետելն է։ Այսպես շարունակվում է մինչև ծանրոցներց հինգը մնան, դրանք են

1. Համապատասխան սնունդ, ապրելու տեղ

2. Կրթություն

3. Առողջապահություն

4. Ազատ ժամանակ և հանգիստ

5. Պաշտպանված լինել

Խաղ

Քննարկման հարց

Որ իրավունքներից էր համեմատաբար հեշտ հրաժարվել որից՝ դժվար։Որո՞նք պահեցիք՝ ինչու՞։

Դաստիարակ- Ես կարծում եմ, որ մենք կարողացանք հաղթահարել առաջին փորձությունը և փրկել << իրավունքի>>քաղաքը։

Դաստիարակ.- Մեզ հյուր եկած գիտունիկը իր հետ բերել է նաև հարցեր, որտեղ կան նաև սխալ կարծիքներ երեխաների ազատության վերաբերյալ, մենք պետք է առաձնացնենք, որ ազատության իրավունքներն են ճիշտ։

Գրիգորը պաղպաղակի թուղթը գետնին էր գցել։

Ես մայրիկիս ասացի, որ շրջազգեստը գեղեցիկ էր։

Մայրիկիս թույլտվությամբ ես ընտրեցի իմ այսօրվա հագուստը։

Տիգրանը ծիրանենու ծաղկած ճյուղ է նվիրել Անիին։

Առավոտյան մանկապարտեզում մենք ընտրեցինք թե ինչ խաղալիքներով խաղանք։

Մանեի հայրիկը արգելում է նրան տնից դուրս գալ։

Հայրիկս բարկացավ, երբ ես վերցրեցի նրա գործիքները։

Ես և քույրիկս միասին խաղում ենք բակում։

Խաղ << Ամենալավ տարբերակը>> գնդակը փոխանցելով իրար պատասխանում են <<Ես այս պարապմունքից սովորեցի>>,<< Իսկ դու՞>>։ Այսպիսով՝ ամեն նախորդ մասնակից հաջորդին է փոխանցում պատասխանելու հնարավորությունը։

Ազատության քաղաք

Երեխաներ ես Արմենն եմ ,ապրում եմ հրաշքների մոլորակում։ Չար տատիկը իմ քաղաքը դարձրել է վանդակների քաղաք, բայց այն, <<ազատության>> քաղաք էր։ Խնդրում եմ երեխաներ օգնեք վերականգնել մեր քաղաքը։

Դե ինչ փակենք մեր աչքերը, հաշվենք 1-10 և հայտնվեք ազատության մոլորակում։ Մինչ երեխաները փակած աչքերով հաշվում են, հայտնվում է գիտունիկը՝ ձեռքին նկար՝ << Կենդանաբանական այգում>>։

Հարց գիտունիկի կողմից

<<Կենդանիները իրավունք ունեն ազատ ապրելու և ինչու՞>>։

Դաստիարակ- Քանի որ դուք ունեք ազատ խոսքի իրավունք եկեք միասին քվեարկենք հետևյալ ձևով.

Բթամատը վեր- համաձայն եմ, որ կենդանիններին ազատ արձակեն։

Բթամատը վար – համաձայն չեմ։

Բթամատատը հորիզոնական – չգիտեմ։

Այնուհետև դաստիարակը իրար հետևից հարցադրումներ է անում, երեխաների ազատությունը թեմայի շուրջ(տվյալ տարիքային խմբի կարողություններին և հետաքրքրություններին համապատասխան)։

Խաղի մեջ կարող են օգտագործվել պարապմունքի համար նախատեսված թեմաներին առնչվող հարցեր՝ կերպարների կայացրած որոշումների վերաբերյալ։

Քննարկման հարցեր

Ի՞նչ էիք զգում, երբ Դուք ունեիք ազատ խոսքի իրավունք կամ ազատ ընտրելու իրավունք։

Էլ ի՞նչ հարցերի վերքաբերյալ կուզեիք քվեարկությամբ կարծիք հայտնել։

Պատվի և արժանապատվության քաղաք

Դաստիարակ- Երեխաներ ես չգիտեմ ինչպես հաղթահարենք այս փորձությունը, մենք ոչ մի հուշող նկար կամ ընկեր չունենք, որ օգնի:

Լսվում է դռան թակոցը, ներս է գալիս Հրաշքների մոլորակի Արքայադուստրը, ձեռքին գեղեցիկ զարդարված գիրք:

- Ես գիտեմ մեզ ով կօգնի: Մեզ կօգնի հեքիաթների հրաշալի գիրքը, այն կախարդական է բացեք և կհամոզվեք:

Դաստիարակը բացում է գիրքը և կարդում հետևյալ հեքիարթների վերնագրերը, որոնք երեխաները սովորել են նախօրոք:<<Անճոռնի ճուտիկը>>, <<Հենզել ու Գրետելը>> և << Մոխրոտիկը>>.:

Որից հետո սկսում են քննարկել

Ինչու՞ էր ճուտիկը տխրել:(որովհետև վիրավորել էին ճուտիկի պատիվն ու արժանապատվությունը) :

Դուք ինչպես կվարվեիք եթե մեր խմբասենյակում լինեին նման տեսքով տղաներ կամ աղջիկներ:

Լսելով պատասխանները, բացատրել երեխաներին, որ անկախ տարիքից, տեսքից, գույնից բոլորը ունեն պատիվ և արժանապատվություն, համատեղ ապրելու իրավունք, և ցանկացած իրավիճակում պետք է օգնել և ընկերանալ նրանց հետ:

Խաղ <<Մեր իրավունքները մեր պաշտպաններն են>>

Խաղի նպատակն է ծանոթացնել երեխայի իրավունքներից մի քանիսին, օգնել գիտակցել դրանց անհարժեշտությունը:

Դաստիարակը երեխաներին բաժանում է 3 խմբի, որից հետո յուրաքանչյուր խումբ պետք է քննարկի մեկական հեքիաթ:

Որտեղ են ոտնահարվել նրանց պատիվն ու արժանապատվությունը:

Վերջացնելոց հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց դիտարկումները՝ դաստիարակի օգնությամբ:

Խաղ- ավարտիր նախադասությունը

Մոխրոտիկը տխուր էր, որովհետև . . .

Ճուտիկը լաց էր լինում, որովհետև . . .

Գրետելը վախեցած էր , որովհետև . . .

Հենզելը չէր վախենում, որովհետև . . .

Ամփոփում

Ի՞նչ սովորեցիք այս պարապմունքից:

Որո՞նք են ձեր իրավունքները:

Ի՞նչ պարտականություններ ունեք դուք:

Ինչպե՞ս պետք է վարվել հատուկ կարիք ունեցող երեխաների հետ:

Դաստիարակ- Մենք լսեցինք տարբեր հեքիաթներ և պատմություններ:

Ի՞նչ հասկացանք:

Որ չի կարելի պիտակավորել մարդկանց, թե՛ կենդանիները, թե՛ երեխաները ունեն ազատ ապրելու իրավունք, երեխաները ունեն ազատ խոսելու իրավունք:-Եվ քանի որ մի փոքրիկ ժպիտը, քաղցր խոսքը կարող է օգնել բոլորին, մենք կխաղանք <<Ընկերությունը սկսվում է ժպիտից>> խաղը:

Շրջանաձև նստած երեխաները բռնում են միմյանց ձեռքերը, նայում են իրենցից աջ նստածի աչքերի մեջ և ամենաբարի ժպիտը նվիրում միմյանց՝ ասելով որն է հրաշալի բառը:

Դաստիարակը կարող է սովորեցնել նաև թեմային համապատասխան բանաստեղծություններ և աշխուժացնող խաղեր երաժշտության ուղեկցությամբ: Մեկ շաբաթվա ընթացքում թեմայի առավելությամբ կարող է կիրառվել խոսքի զարգացման ցանկացած տեսակ:Զրույց, խաղ պարապմունք, ոտանավորի ուսուցում, խորացում, դիդակտիկ խաղ, դաստիարակի օրինակով պատմում: Վերջիններս կարելի է ինտեգրել կերպարվեստի, մաթեմատիկայի և գործունեության տարբեր տեսակների հետ: Ի հավելումն այս ամենի՝ թեմայի ավարտին երեխաներին նվիրում են թղթից պատրաստված տարբեր երկրների դրոշակներ, որոնց վրա նախապես գրված են երեխաներին գովերգող բարեմախթանքներ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով երեխաների իրավունքները, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը՝ եկանք այն եզրակացության, որ երեխաները օժտված են մարդկային միևնույն ընդհանուր իրավունքներով, որոնցով ճանաչվում են նրանց հատուկ կարիքները:Երեխաները իրենց ծնողների սեփականությունը չեն, և ոչ էլ բարեսիրության անօգնական օբյեկտները: Նրանք մարդկային էակներ են և իրենց իսկ իրավունքների սուբյեկտները:

Յուրաքանչյուր երեխա ունի պատիվ և արժանապատվության իրավունք: Ոչ մի երեխա անձնական , ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության, գաղտնիության կամ բնակարանի անձեռնամխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և ազատ խոսքի իրավունք: Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Ցանկալի է, որ յուրաքանչյուր անձ, ով աշխատում է երեխաների հետ, պահպանի բոլոր այն նորմերն ու օրենքները, որոնք վերաբերվում են երեխաներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դրական ծնողավարման ձեռնարկ

2. Հանդուրժողականության ուսուցում

3. Նախաշավիղ

4. <<Փրկենք երեխաներին>>միջազգային կազմակերպություն